ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<<Մանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Դիտորդ խորհրդի 25.09.2024թ. նիստի

ք.Երևան *25.09.2024թ.*

Նախագահությամբ Լ.Պետրոսյանի

Քարտուղարությամբ Գ.Հովսեփյանի

Նիստին մասնակցում էին Դիտորդ խորհրդի հետևյալ անդամները՝

1. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Լևոն Պետրոսյան*
2. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Վահագն Ավագյան*
3. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Հովհաննես Եղյան*
4. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Խաչիկ Նազարյան*
5. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Տիգրան Սահակյան*
6. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Գևորգ Ավագյան*

Քվորումն ապահովված է, և Դիտորդ խորհրդը իրավազոր է որոշումներ ընդունել օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ:

Օրակարգում՝

1.<<Մանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության ընդհանուր ժողովի կազմակերպման, անցկացման և օրակարգի մասին հարցի քննարկում :

2.Հաշվիչ հանձնաժողովի կազմի ընտրության հարցը :

3.Մանկության գործերով կառավարիչների վերապատրաստման դասընթացներն անցկացնելու հարցի քննարկում :

5.Ընթացիկ հարցեր :

Կապված Դիտորդ խորհրդի նախագահ Արսեն Չիտչյանի բացակայության հանգամանքով, համաձայն <<ՍԳԿԿ>> ԻԿ Կանոնադրության 10-րդ հոդվածի 18-րդ կետի նիստը վարում է Դիտորդ խորհրդի ամենատարեց անդամ Լևոն Պետրոսյանը:

Մինչև օրակարգի հարցերի քննարկմանն անցնելը, <<Մանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Դիտորդ խորհրդի նիստի նախագահող Լ. Պետրոսյանը հանդես եկավ ողջույնի խոսքով:

1. Դիտորդ խորհրդի նիստի նախագահող Լևոն Պետրոսյանը ներկայացրեց օրակարգի 1-ին հարցը և այն դրվեց քննարկման:

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումն հայտնեցին Լևոն Պետրոսյանը, Վահագն Ավագյանը, Տիգրան Սահակյանը, Հովհաննես Եղյանը, Գևորգ Ավագյանը, Խաչիկ Նազարյանը և առաջարկեցին ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկել հետևյալ հարցերը՝

1. *<<ՍԳԿԿ>> ԻԿ 01.05.2023թ. առ 01.11.2024թ. գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունը :*
2. *<<ՍԳԿԿ>> ԻԿ Վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը :*
3. *<<ՍԳԿԿ>> ԻԿ Կարգապահական հանձնաժողովի հաշվետվությունը :*

4. <<ՍԳԿԿ>> ԻԿ Կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու հարցը :
5. <<ՍԳԿԿ>> ԻԿ Դիտորդ խորհրդի կազմի ընտրության հարցը :
6. Վերստուգիչ ծառայության կազմի ընտրության հարցը :
7. Կարգապահական հանձնաժողովի կազմի ընտրության հարցը :
8. Ընթացիկ հարցեր :

<<Մանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Դիտորդ խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

Հաստատել <<ՍԳԿԿ>> ԻԿ տարեկան ընդհանուր ժողովի օրակարգը :

Կողմ-6
Դեմ-0
Ձեռնպահ-0
Որոշումն ընդունվեց միաձայն:

Հանձնարարել ՍԳԿԿ՝ ԻԿ գործադիր տնօրեն Ա.Ելինյանին կատարել տարեկան ընդհանուր ժողովի անցկացման վայրի, ժողովի կազմակերպման, անցկացման նախապատրաստական անհրաժեշտ աշխատանքները և ժողով հրավիրել 09.11.2024թ. ժամը 11:00-ին:

2. Դիտորդ խորհրդի նիստի նախագահող Լ.Պետրոսյանը ներկայացրեց օրակարգի 2-րդ հարցը և <<ՍԳԿԿ>> ԻԿ Կանոնադրության 9.3 կետի համաձայն Հաշվիչ հանձնաժողովի երեք հոգանոց կազմի համար առաջադրեց երեք թեկնածուներ՝ Ռուզան Հովհաննիսյան, Ռուզաննա Մարգարյան և Անահիտ Ղազարյան:

Հարցը դրվեց քննարկման:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումն հայտնեցին Տիգրան Սահակյանը, Հովհաննես Եղյանը, Գևորգ Ավագյանը, Խաչիկ Նազարյանը և Վահագն Ավագյանը :

<<Մանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Դիտորդ խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

Հաստատել <<ՍԳԿԿ>> ԻԿ Հաշվիչ հանձնաժողովի հետևյալ կազմը՝

1. Ռուզան Հովհաննիսյան
2. Ռուզաննա Մարգարյան
3. Անահիտ Ղազարյան

Կողմ-6
Դեմ-0
Ձեռնպահ-0
Որոշումն ընդունվեց միաձայն:

3. Դիտորդ խորհրդի նիստի նախագահող Լ.Պետրոսյանը ներկայացրեց օրակարգի 3-րդ հարցը, այն է՝ ՀՀ Արդարադատության նախարարի 30.07.2024թ. թիվ 444-Ն հրամանի համաձայն սնանկության գործերով կառավարիչների վերապատրաստման դասընթացներն կարող ենք անցկացնել նաև հեռավար ուսուցմամբ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ

որոշակի թվով կառավարիչներ բնակվում են հանրապետության տարբեր մարզերում և զալ Երևան և մասնակցել առկա ուսուցմամբ դասընթացներին կապված է դժվարությունների հետ, ուստի առաջարկում եմ վերապատրաստման դասընթացները անցկացնել հեռավար ուսուցմամբ :

Հարցը դրվեց քննարկման:

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումն հայտնեցին Գևորգ Ավագյանը, Վահագն Ավագյանը, Տիգրան Սահակյանը, Հովհաննես Եղյանը և Խաչիկ Նազարյանը:

<<Մանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Դիտորդ խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

Մանկության գործերով կառավարիչների վերապատրաստման դասընթացները անցկացնել հեռավար ուսուցմամբ :

Կողմ-6
Դեմ-0
Ձեռնպահ-0
Որոշումը ընդունվեց միաձայն :

Նախագահող՝ Լ.Պետրոսյան

Քարտուղար՝ Գ.Հովսեփյան